

**ՄԱՔՐԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ
ՏԱՃԱՐՈՎ՝ ՄԵՐ ԱՆՉԵՐԸ**

Կը խնդրեմ, սիրելիներ, ամիս չըլլանք, այլ՝ թօթափենք մեր կեանքի ծուլութիւնը եւ նորոգենք մեր սիրտերը Քրիստոսով: Ապաշխարենք՝ մեր գործած մեղքերը խոստովանելով եւ զգուշանանք գալիքներէն: Մեր մեղքերու տիղմը արտասուքով լուանք, մեր անձերը սրբենք՝ ձիւնէն աւելի սպիտակացնենք եւ բուրդէն աւելի մաքրենք եւ այս տարագով Աստուծոյ մարդասիրութիւնը մեր վրայ հրաւիրենք, որպէսզի խոստացուած բարիքներուն արժանի ըլլանք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի շնորհքով եւ մարդասիրութեամբ, որով եւ որուն հետ Հօր եւ Հոգւոյն փառք, իշխանութիւն եւ պատիւ վայել է այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլ ներուն ու իրենց մարմինը մաշող ներուն, վասնզի գինեմոլն ու շոայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուտած հանդերձներ կը հագցնէ:

Հնապանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ռ ու վանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, խրատն ու հանձարը:

Արդարին հայրը շատ պիտի ցընծայ եւ իմաստուն վաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց »կեղեցոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի: Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը:

Հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՒՆՉԻ ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Մամուլէան – Էռագոյն» սրահին մէջ, 18-40 տարեկան երիտասարդ-երիտասարդուհիներու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Միտելի ընթերցող, ճՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – [facebook-ի էջ jerak](#) Ծրագր քերթ



ՔՈՒ ԽՕՍԲԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 24 ՓԵՏՐՈՒԷՐ 2019 ԹԻԻ 8

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 63.18-64: Տիտ. 1.1-11:
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7.37-52

Չ. ՉԿՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝ «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին, իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Ասիկա է նշմարիտ մարգարէն»:

Ուրիշներ կ'ըսէին. «Քրիստոսն է»:

Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսեր, թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհեմի մէջ պիտի ծնի»:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարակեցաւ ձեռք գարնել:

Երբ տանարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու Փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»:

Պահակները պատասխանեցին. «Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»:

Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ Փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր օրէնքը չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:

Նիկողեմոս, Փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ գիտնալը, թէ ի՞նչ ըրած է»:

Անոնք պատասխանեցին Նիկողեմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Քննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ըլլեր»:

Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԳԻՐՔԵՆ
63.18- - 64.12**

Ձրլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիոնը, քան սուրբ լեռդ, որովհետև ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր:

Եթէ երկինքը պատուիր եւ երկիր իջնէիր՝ լեռները քու դիմացդ պիտի դողային ու հալէին մոմի պէս, ինչպէս կրակը կ'այրէ անտառները եւ կը շոգիացնէ ծովերը: Հակառակորդներդ պիտի ցանցնային քու անունդ եւ հեթանոսներ պիտի դողային քու դիմացդ, միշտ ինչպէս քանիցս իջար եւ անսպասելի հրաշագործութիւններէդ լեռները սասանեցան:

Որեւէ ականջ երբեք լսած չէ, որեւէ աչք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով, որ դուն ըրիր: Դուն օգնութեան կը հասնիս բոլոր անոնց, որոնք ուրախութեամբ արդարութիւն կը գործեն եւ քու ցամաքներէդ կը քալեն: Բայց մեզի դէմ բարկացած ես հիմա, որովհետև մեզ գործեցինք եւ մոլորեցանք:

Մեղքով վարակուած եւ պղծուած ենք բոլորս ալ: Մեր արդար սեպած գործերն իսկ գարշելի են քեզի համար: Մեր անօրէնութիւններուն պատճառով չոր տերեւներու պէս կը թափփինք եւ հովերը կը քշեն մեզ: Ա՛յ աղօթող չկայ քեզի: Չկայ մէկը, որ սթափելով քեզի ապաւինի: Երես դարձուցիր մեզմէ եւ մեր մեղքերուն պատճառով մեզ անդութեան մատնեցիր:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՏԻՏՈՍԻՆ
1.1-11**

Ես, Պօղոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքեալը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին, այն ճշմարտութեան՝ որ աստուածաշնորհութեամբ կը գտնուի, որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն իսկ առաջ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա յարմար ժամանակը հասած համարելով, այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյն հրամանով:

Ո՛վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Քեզ Կրեաւ թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երեցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եպիսկոպոսը, որպէս Աստուծոյ տնտեսը պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, գինեմոլ, կոռուական կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ժուժկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր ստրված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՄԱՅԱԿ ՊԱՐԹԵՒ ԶԱՅՐԱՊԵՏ

Ս. Մահակ Պարթեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմութեան» աշխատութեան մէջ:

Մահակ Պարթեւ Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հռետորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Մահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ քաջ զիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Մահակ Պարթեւ մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսաւորիչի տոհմը: Ան յաճախ Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արու զուսակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Մահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Մահակ, որպէս սարկաւազ պէտք է սպասաւորեր:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Մեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսաւոր մարդու կերպարանքով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսաւորիչի տան քահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Մահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցոյ պէտքերը: Իր Մահականուշ դուստրն ալ կնութեան կու տայ Համագասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս:

Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններուն, հայոց Վռամշապուհ թագաւորի եւ Ս. Մահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վռամշապուհ բարեպաշտ թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հռիփսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ կը զբաղի հայոց նշանագիրներ գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ գանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Մահակ կը դիմէ Կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին, իր թոռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ ճանչնալու խնդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառաջեն անոր խնդրանքին: